մաքառումից յետոյ ուր ուրեմն հասկացան թէ անհնարին է մի ազգ իւր ազգային կրօնից ու սովորութիւնից ուժով յեղաշրջել դէպի մի այլ կրօն և սովորութիւն։ Ահա այսպէս վերջացաւ երեսնամեայ հալածանքը Հայ եկեղեցու, որին սակաւ բացառութեամբ հաւատարիմ մնալով Հայերը՝ ամեն նեղութիւն, վիշտ, տառապանք, տարագրութիւն, մահ, և աւերութիւնք յանձն առան։ Հայք նեղութեան մէջ, քրիստոնէական եղբայրսիրութեամբ ի հարկաւոր դէպս շտապումէին օգնել Աղուանից և Վրաց, սակայն այս բոլոր հալածանաց ժամանակ, Յունաց հզօր կայսրութիւնը ոչինչ օգնութիւն չըհասցրեց Պարսիկների բարբարոսութեանց նշանակ եկեղեցուն, թէև քանիցս յօգնութիւն կոչուեց։ Հալածման դադարումից յետոյ, եկեղեցւոյ փրկութեան բազմաշխատ նահատակ և եկեղեցւոյ պայծառութեան ժիր մշակ Սուրբ Յովհան Մանդակունի հայրապետը վախճանումէ խորին ծերութեան մէջ։

(Շարունակելի) Յ. Վ. Մ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՒՍՈՒՑՉԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ.

Ամեն որ, երբ մի որ և է պաշտօնով է պարապում՝ պէտք է այդ պաշտօնին վերաբերեալ տեղեկութիւնները և պատրաստութիւնը ունենայ. այնպիսին միշտ առաջ է գնում — և կատարելագործվումէ՝ երբ իւր ունեցած տեղեկութիւններով չի բաւականանում, այլ հետ զհետէ ինքնուրոյն աշխատութեամբ ձեռք է բերում իւր պաշտօնին վերաբերեալ նոր տեղեկութիւնները։

*Ուսուցիչն, իւր պաշտօնի համար մի որոշեալ պատրաստութիւն ունենալով՝ միշտ միևնոյն զարգացման աստիճանի վերայ պիտի չը մնայ. նա հետ զհետէ պիտի կատարելագործուի իւր պաշտօնի *) մէջ։*

Ուսուցչի կատարելագործութիւնն անհրաժեշտ է,

Նախ՝ նորա համար, որ աշակերտների վերայ արդիւնաւոր ազդեցութիւն ունենայ, Ով որ մի և նոյն տեղի վերայ է կանգնած, ուրիշին դժուարութեամբ առաջ կըտանի. ով որ կատարելագործուելու սէր չունի, նա ուրիշ-

---

(*) Ցաւելով պէտք է խոստովանեմ, որ իմ պաշտօնակիցներիցս շատերն իրանց պաշտօնին վերաբերեալ ոչ մի գրուածքով չեն հետաքրքրվում եւ չեն կարդում...

Խան. Յով.

ների մէջ չէ կարող նոյնը զարգացնել։ Այն ուսուցիչը, որի մէջ մեռած, թմրած է կատարելագործուելու սէրը, աշակերտների վերայ կենդանացուցիչ և առաջ մղող ազդեցութիւն չի կարող ունենալ։

Երկրորդ՝ նորա համար որ, որպէս զի իւր աւանդելի առարկայից և նորա մեթոդական մշակումից յետ չըմնայ։ Աւանդելի առարկայն և մանաւանդ նորա մեթոդիկան միշտ մշակվումէ. եթէ ուսուցիչն այս մշակմանը չէ հետևում, նա յետ է մնում։ Այսպիսին այն ուսուցիչներից յետ կը մնայ՝ որոնք աշխատումեն կատարելագործուիլ։ Բացի սորանից ուսուցիչն, իւր կատարելագործութեան մասին չըհոգալով իւր սովորածից շատ ու շատ բան է մոռանում. նորա մէջ մնացող տեղեկութիւններն էլ կորցնումեն իրանց թարմութիւնը։ Այսպէս նոր, մոռաւոր պաշարը հետզհետէ նուազումէ և նա վերջ ի վերջոյ անարժան է դառնում իւր կոչմանը։

Երրորդ՝ ուսուցչին կատարելագործուիլ անհրաժեշտ է նորա համար որ, որպէս զի դէպի գործունէութիւն ունեցած պահանջն արդիւնաւոր լինի. եթէ այս պահանջն ինքնագործունէութեան մէջը բաւականութիւն չէ գտնում, այն ժամանակ իրան բաւականութիւն է տալիս այնպիսի գործունէութեամբ, որ ոչ թէ միայն օգտակար, այլ մինչև անգամ վնասակար է։ Ուսուցիչն իւր ազատ ժամերը՝ (այսպէս ասել՝ ժամանակ անցկացնելու համար) փոխանակ օգտակար պարապմունքի վերայ գործ դնելու նուիրումէ անօգտակար գործունէութեանը։

— Վերջապէս չորրորդ՝ ուսուցչին կատարելագործութիւնն անհրաժեշտ է նորա համար որ, որպէս զի իւր մէջ վառ պահի աշխոյժ և սէր դէպի իւր աւանդելի առարկան և գործը։

Ուսուցիչն այն բոլոր բաների մէջ պիտի կատարելագործուի, ինչ որ նպաստումէ ուսման յաջող տանելուն և աշակերտաց դաստիարակութեանը։

Ուսուցչի կատարելագործութեանը նպաստումեն –) գրքերի կարդալն և ուսումնասիրելը. բ) աշակերտների վերայ դիտողութիւն անելն և նոցա ուսուցանելն և գ) մանկավարժական խօսակցութիւնները։ Ասածներից ամեն մինը բացատրենք։

Ա) Գրքերի կարդալն և ուսումնասիրելն կատարելագործուելու բնական միջոցն է։ Գրքերը կարդալով ուսուցիչը թէ սովորածը յիշողութեան մէջ վերականգնեցնում է թէ իւր սովորած տեղեկութիւնների նոր բացատրութեան հետ է ծանօթանում և թէ նոր տեղեկութիւններ է քաղում։

Ուսուցչի համար ամենայարմար ընթերցանելի գրքերը նորա են, որոնք մի որև է կապ ունին նորա գործունէութեան հետ և ամենից առաջ այնպիսի գրքերը պիտի կարդայ, որոնք իւր աւանդելի առարկային են վերաբերում, որովհետև մի առարկայի մասին տեղեկութիւններն պարզաբանվումեն նորա հետ կապ ունեցող առարկաների տեղեկութիւններով։ այս պատճառաւ էլ հարկաւոր է, որ ուսուցիչն այս առարկաներն էլ ուսումնասիրէ։ Ուսուցիչը գրքեր կարդալով պիտի պարզաբանէ աւանդելի առարկայի ո՛չ թէ միայն գլխաւոր կէտերը, այլ և երկրորդականները։ Ուսուցիչը այնպիսի գրուածները

պիտի կարդայ, որոնք կարող են լուսաբանել և նպատակայարմար ուղղութիւն տալ իւր գործունէութեանը, այսինքն անհրաժեշտ է կարդալ և ուսումնասիրել մանկավարժական գրուածքները *) (ֆիզիքական մտաւոր և բարոյական կրթութեան մասին, մանկավարժութեան պատմութիւն ևն) և նմանապէս այն գրուածները կարդալ՝ որոնց վերայ հիմնուած է մանկավարժութիւնը (հոգեբանութիւն, տրամաբանութիւն, առողջապահութիւն ևն)։ Ուսուցիչը նաև պիտի այնպիսի գրքերը կարդայ, որոնք կարող են նորա զգացմունքները աղնուացնել և որոնցից կարելի է առողջ մտքեր քաղել և կամ որոնք ընդհանուր կրթողական նշանակութիւն ունին։ Այս տեսակ նպատակին ծառայումն բանաստեղծական և պատմական գրուածները։ Ի հարկէ գրքերն ուշադրութեամբ պիտի կարդանք, եթէ ուզում ենք նոցանից օգուտ քաղել։ Կարդալու ժամանակ ուսուցիչն իւր կարդացածի մասին ինքն իրան հաշիւ պէտք է տայ և նշանաւոր տեղերն էլ արտագրէ իւր յիշատակարանում։

Բ) Աշակերտների վերայ դիտողութիւններ անելն և նոցա ուսուցանելը նոյնպէս ուսուցչի համար կատարելագործուելու միջոց է։ Ուսուցիչն, աշակերտների վերայ դիտողութիւններ անելով, ծանօթանում է նոցա հոգեկան առանձնայատկութիւնների հետ, նոցանից ամեն մինի ընդունակութիւնների հետ և այս կերպով իւր համար շատ թանկագին տեղեկութիւններ է ձեռք բերում։ Այսպիսի դիտողութիւնների համար լաւ կը լինի յիշատակարան ունենալ և մէջը գրել։ Ընդհանրապէս աշակերտների բնութեան հետ և մանաւանդ ամեն մինի առանձնայատկութիւնների հետ ծանօթանալն ուսուցչի համար ամենահարկաւոր բանն է։ Միմիայն այս ժամանակ ուսուցիչը կարող է յաջող ազդեցութիւն ունենալ իւր աշակերտների վերայ։

Աշակերտներին ուսուցանելը ուսուցչին կատարելագործում է աւանդելի առարկայի և նորա մեթոդի մշակման մէջ։ Ուսուցիչն ուրիշներին ուսուցանելով, ուսանում է և ինքն։ Ամեն անգամ ուսուցանելիս ուշադիր ուսուցիչը միշտ շահվում է, մի նոր բան իւր համար պարզելով։ Կատարելագործուելու սէր ունեցող ուսուցչի դասաւանդութիւնը հետզհետէ կատարելագործվում է և այսպիսի կատարելագործութեան մէջը պակաս դեր չէ խաղում նորա փորձառութիւնը։

Առ հասարակ կան, որոնք ենթադրումեն թէ մի և նոյն առարկայի մի քանի տարի դաս տալն և նոր աշակերտներին հաղորդելն ուսուցչի կատարելագործուելուն չեն նպաստում։

Բայց այս այսպէս չէ. աշակերտները մի և նոյն զարգացման աստիճանի վերայ չեն մնում, նոքա միշտ հետևողաբար յառաջ են գնում. իսկ նոցա հետևողաբար զարգացմանը հետևելն ուսուցչի կատարելագործութեան համար ընդարձակ ասպարէզ է բացում։ Աշակերտները մի դասարանից միւս դա-

---

(*) Թէ եւ այս ճիւղով մեր գրականութիւնն աղքատ է, բայց ցանկացողը կարող է օգուտ քաղել օտար գրքերից։

սարանը տեղափոխուելով կարիք են ունենում նոր տեղեկութիւններ ստանալու։ ուրեմն բնական է՝ որ ուսուցիչը մի և նոյն նիւթի վերայ չէ կանգնում։

Ինչ որ վերաբերվում է մի և նոյն առարկայի մի քանի տարի դաս տալուն, այս կասենք՝ որ թէև մի և նոյն դասարանի մէջ մի և նոյն տեղեկութիւններն են կրկնվում՝ բայց նիւթի մշակումն կարող է այլ ձև լինել։ իւրաքանչիւր տարի նոր աշակերտներ են մտնում։ իսկ նոր աշակերտներին մատակարարելու համար այլ ձև պիտի գործ դնել։ այսպէսով կատարելագործվում է առարկայի մեթոդը՝ ուսուցիչը հետևելով այն կատարելագործութեանը։ կատարելագործում է իւր մեթոդը։ և սորանով էլ կատարելագործվում է ինքն։

Գ. Վերջապէս։ խօսակցութիւններ մանկավարժական հարցերի մասին ունենալ իւր պաշտօնակիցների և այս հարցով հետաքրքրուող անձանց հետ նոյնպէս կատարելագործուելու միջոցն են կազմում։ Խօսակցութեան ժամանակ ուսուցիչն յայտնում է իւր դիտողութիւնները՝ ու իւր կարծիքն այս կամ այն մանկավարժական հարցի մասին։ միւսը լսում է և փոխադարձ յայտնում իւրը։ այսպէս մտքերի փոխանակութիւն է լինում և ուսուցիչը ստանում է օգուտ։ Շատ անգամ խօսակցութեան ժամանակ յանկարծ մի այսպիսի հարց է պարզվում՝ որ ինքն մենակ ուսուցիչը չէր կարող իւր համար պարզել։ Առ հասարակ մտքերն իրար հաղորդելու և հարցերը պարզաբանելու համար լինում են մանկավարժական նիստեր կամ ուսուցչական ժողովներ։

Այսպիսի ժողովների օգուտը մեծ է։ Բացի այս ժողովներից ամեն մի ուսուցիչը պէտք է խորհրդակցէ իւր պաշտօնակիցների և առ հասարակ այն մարդոց հետ՝ որոնք ուսումնարանի կեանքի հետ ծանօթ են։ Այսպիսի խորհրդածութիւններն ոչ թէ միայն ուսուցչի կատարելագործուելուն են նպաստում՝ այլ և նորա մէջ զարթեցնում են սէր դէպի մանկավարժական գործը։ Բացի սորանից մանկավարժական հարցերի մասին խօսակցութիւնները միօրինակութիւն են մտցնում ուսուցիչների գործունէութեանց մէջ։ միաօրինակութիւնն դաստիարակական գործում շատ կարևորէ։

Խօսելով ուսուցչի կատարելագործուելու միջոցների մասին՝ պիտի ասել և այս՝ որ այդ միջոցները իսկապէս այն ժամանակ կարողեն ուսուցչին օգուտ տալ՝ երբ որ նորա մէջ զարթած կը լինի կատարելագործուելու ճշմարիտ փափագը։ առանց որոշ միջոցներն անօգուտ են։ Միմիայն նա կարող է նոր՝ տեղեկութիւններ հաւաքել՝ ով որ հետամուտ է լինում նոցա։ և միմիայն նա է կատարելագործվում՝ ով որ կատարելագործուելու սէր ունի։ Զարգացումն ինքն իրան ոչ ոքի ուղեղի մէջ չէ մտնում՝ այլ ստացվում է աշխատութեամբ։ իսկ այսպիսի աշխատութեան համար հարկաւորէ ունենալ ներքին դրդիչ ոյժ։

Ուսուցիչը բացի մտաւորապէս կատարելագործուելուց՝ պիտի կատարելագործուի և բարոյապէս։ Մեր Ուսուցչապետ Քրիստոսը ուսուցանում է մեզ «Եղերուք կատարեալ՝ որպէս Հայրն ձեր կատարեալ է»։ Սա ամեն մի մարդու պարտականութիւնն է նա մանաւանդ ուսուցչի համար՝ որ ուրիշների համար հայելի է։

Ուսուցիչն իւր վարմունքների վերայ միշտ ուշադրութիւն պիտի դարձնէ՝ Նա իւր առաջը բարոյական կատարելատիպ (իդէալ) պիտի ունենայ որ ձգտէ դէպի նորան։ Այսպիսի կատարելատիպը ներկայացնում է մեր Փրկչի ուսումը։ Այս կատարելատիպն աչքի առաջ ունենալով և ձգտելով դէպի նորան, ուսուցիչն իւր բարոյական կատարելագործութեան մէջ յետ չի մնալ. Նորան միշտ կը գրաւէ բարոյական բարձր աստիճանն և միշտ ընդարձակ ասպարէզ կը լինի նորա առաջ իւր բարոյական կատարելագործութեան համար։

Բ–ք–– Գաբրիէլ Տէր Գաբրիէլեանց։

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ.

(Շ–ր––Ն–կ––Բէ–Ն, Աւ–ր–տ 1885 Թ. Ա.)

Իննակնեան լեռնադաշտերն կը հիացնեն զմեզ իրենց տակաւին թարմ ծաղկանց հոտերովը և դալարագեղ մարգագետիններու տեսարաններովը։ Հատ շտապով կը քալէինք. ամսոյն 18ին իջանք ի Կարին, յորում տեսնելով Ազգ. Հայկական Առաջնորդարանն և մի քանի գեղեցկաշէն երկսեռ վարժարաններն՝ ուրախացանք ոչ սակաւ։ Կարնոյ Հայք շատ դժբաղդ կը համարեն իրենք զիրենք առանց առաջնորդի մնալնուն համար, որոնց մեծ մասը կուզէ Հայր Օրմանեանին. իսկ չուզողները տրտունջ ունէին նորա անտնտեսագէտ լինելոյն առթիւ և փորձառութիւն չունենալոյն համար, որուն առաջնորդութեան ժամանակ Ազգ. Առաջնորդարանը հազար ոսկիէն աւելի պարտուց ենթակայ եղած է կըսեն։

Գալով Սանասարեան մեծահամբաւ Աղա Մկրտիչ Ազգայնոյ անդ բացած վարժարանին՝ զորմէ կը խօսէ ժողովուրդն առհասարակ յափշտակուելով նորա մանկավարժ դասատուների ձեռաց տակ վարժուող աշակերտաց այս տարուան տուած հարցաքննութեանց մասին, ինչպէս մեծ ազդեցութիւն և տպաւորութիւն ըրած էին ունկնդիր ժողովրդեան վերայ նոյնը ըրաւ և իմ վերայ։ Աննկարելի է նկարագրել ժողովրդեան երախտագիտութիւնն առ բարերարն վարժարանին, բիւր մաղթանքներն և ի խոր սրտէ շնորհակալիքն. առ այս, կարծեմ, կըպատրաստէին մի շնորհակալեաց ուղերձ ներկայացնելու Աղա Մկրտիչ Սանասարեանին ընդ միշտ երախտագիտութիւն առ նորին մեծապատուութիւն ցուցնելով։ Մեք այս տողերն չըպիտի գրէինք, եթէ պարտք չըդգայինք ճշմարիտ եղելութիւնը հրապարակելու և գիտեմ որ այս տեսակ մարդասիրական հայկական գործեր շարունակող հայկական անձինք փոփոխութիւն մը չեն կրեր իրենց բնական անփառասիրութեան մասին եղած համեստ, չափաւոր և իրաւացի գովեստներէն։ Արդէն տեղւոյն Վսեմ. Կուսակալին և իրեն հետ երկու փաշաներու, իրենց ստորադասեալ պաշտօնեաներով Օգոստոսի սկիզբները, ի մասնաւորի Սանասարեան Վարժարանը այցելութեան գալն Արեւելք հրատարակեց։ Այս վարժարանը այժմ կուսանին հարիւրի չափ տղայք, որոց քառասունէն աւելին ձրիավարժ, յիսունը գիշերօթիկ և տասը երթեւեկ թոշակաւորներ են, որոց ծնողք կըկարծեն որ ոչինչ կըվճարեն և այժմ շատերը աղաչելով կուզեն վարժարան տալ իրենց զաւակունքը։